

Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ, Հայ տեղական մամուլը և գրատպությունը
Վրաստանում, Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2012, 255 էջ:



Հայ տպագրության սկզբնավորման 500-ամյակին նվիրված հոբելյանական սակավաթիվ հրատարակությունների շարքում իր կարևորությամբ ու գիտական նորությամբ աչքի է ընկնում Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Ս. Մաղալյանի գրախոսվող աշխատությունը: Եթե անցյալի մեր նշանավոր գիտնականները ստեղծել են մի շարք հիմնարար ուսումնասիրություններ և միաժամանակ կազմել հայ մամուլի ու գրքի մատենագիտական բազմահատոր ցանկեր, ապա նույնը չենք կարող ասել վրացահայ մամուլի ու գրատպության ամբողջական պատմության ստեղծման վերաբերյալ:

Հայ հարուստ մամուլը, որի սկզբնավորման 220-ամյակը լրանալու է շուտով, մեր պատմագրության և բանասիրության կողմից դեռևս լիարժեքորեն չի ուսումնասիրվել: Եթե հայերեն առանձին աչքի ընկնող թերթերի ու հանդեսների մասին գրվել ու տպագրվել են հատուկեհտ աշխատություններ, ապա այն ամբողջությամբ հետազոտողների կողմից դեռևս պատշաճ ուշադրության չի արժանացել: Մենք մինչև այժմ, մատենագիտական ցուցակներից բացի, չունենք մեր շատ գաղթավայրերի հայատառ պարբերականների ընդհանուր պատկերը ներկայացնող ուսումնասիրությունները: Մենք նույնիսկ Հայաստանի Հանրապետության տարածքում տպագրված մամուլը դեռևս լիարժեք չենք ուսումնասիրել, բազմաթիվ պարբերականներ ցարդ մնում են հետազոտողների ուշադրությունից դուրս, էլ չենք խոսում մյուս հանրապետություններում տպագրված մամուլի օրգանների մասին:

Այդ հետազոտությունները մենք պետք է կարողանանք կարճ ժամանակամիջոցում կատարել, որպեսզի հնարավորություն ունենանք դրանց հիման վրա ամբողջացնելու աշխարհի չորս ծագերում տպագրված ավելի քան 4.000 անուն հայալեզու պարբերականների գոնե համառոտ պատմությունը, մի բան, որը վերջերս ձեռնարկել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժինը (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ա. Ա. Խառատյան) և արդեն հրապարակի վրա է այդ եռահատոր կոլեկտիվ աշխատության անդրանիկ գիրքը¹: Ընթացքի մեջ է երկրորդ հատորի խմբագրումը, և միաժամանակ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում երրորդ հատորի ստեղծման ուղղությամբ:

¹ Տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր, հատ. 1, Գահիրե, 2006, 702 էջ:

Վ. Մաղալյանի հեղինակած ներկա գիրքը, անշուշտ, կարող է իր նպաստը բերել հայ մամուլի պատմության այդ բազմահատորյակի ստեղծման գործին: Նա մեր այն ճանաչված հեղինակներից է, որը առանց որևէ աջակցության ու ֆինանսական օժանդակության իր ժամանակի ու միջոցների հաշվին տարիներ շարունակ հետազոտել է Վրաստանի տեղական ու կենտրոնական հայ պարբերական մամուլն ու գրատպությունը, եղել է դրանց տպագրության վայրերում, հանդիպումներ է ունեցել հնագույն լրագրողների ու խմբագիրների, տպարանների տնօրենների ու պոլիգրաֆիստների, տպագրիչ վարպետների հետ, եղել է տեղական բազմալեզու թերթերի խմբագրություններում, գավառագիտական թանգարաններում ու արխիվներում և պարզել է վրացահայ մամուլի ու գրատպության անցյալին ու ներկային վերաբերող բազմաթիվ ու բազմապիսի հարցեր: Դրանց շուրջ նա հայրենական ու արտասահմանյան գիտական հանդեսներում ու ժողովածուներում տպագրել է բազմաթիվ արժեքավոր հոդվածներ: Այստեղ նշենք նաև, որ Հայկական խորհրդային և Հայկական համառոտ հանրագիտարաններում նույնպես Վրաստանի նոր և նորագույն շրջանների հայ մամուլի առանձին աչքի ընկած օրգանների մասին ընդգրկված են նրա հեղինակած 100-ից ավելի բառահոդվածները:

Ներկա մենագրությունը ևս Վ. Մաղալյանի այդ ժրջան պրպտումների արդյունքն է, որը նվիրված է վրացահայ տեղական, այսինքն՝ գավառային, մարզային ու շրջանային մամուլի ու գրատպության մեկ հարյուրամյակից ավելի ժամանակահատվածի (1885-1990 թթ.) պատմության վերհանմանը, որը նորություն է մեզանում: Հայ տեղական մամուլն ու գրատպությունը հետազոտողների ուշադրությանը չեն արժանացել. մենք ցարդ այդ ուղղությամբ կատարված գրեթե ոչ մի աշխատանք չունենք: Վ. Մաղալյանի ներկա ուսումնասիրությունը մեզանում առաջին փորձն է, որն արժանի է ամենայն ուշադրության:

Մենագրությունը բաղկացած է առաջաբանից, դրան հաջորդող երկու մասից, վերջաբանից ու մատենագիտական ցանկից: Առաջին մասն ընդգրկում է նախախորհրդային (1885-1920 թթ.), իսկ երկրորդը՝ խորհրդային (1921-1990 թթ.) ժամանակաշրջանը: Առաջին մասում, որն ունի երեք գլուխ, ներկայացված է Վրաստանի հինգ հայաբնակ գավառների ու մարզերի, որոնք են Սամցխեն, Ջավախքն ու Կախեթը, ինչպես նաև Սև ծովի կովկասյան ափերի մարզկենտրոններ Բաթում և Սուխում քաղաքների նախախորհրդային շրջանի հայ գրական-մշակութային կյանքը, մամուլն ու գրատպությունը: Այս մասի առաջին գլուխն ամբողջությամբ նվիրված է Ախալցխայի ու Ախալքալաքի գավառների գրական-մշակութային կյանքին՝ սկսած XIX դարի կեսերից մինչև XX դարի առաջին երկու տասնամյակների ավարտը, երբ Վրաստանում հաստատվում են խորհրդային կարգեր: Սև ծովի կովկասյան ափերի ու Կախեթի մամուլն ու գրատպությունը ներկայացնելուց առաջ հեղինակը կրկին անդրադարձել է այդ վարչական տարածքների հայկական բազմաբեղուն կյանքին, որի համայնապատկերի վրա ուրվագծել է մամուլի ու գրատպության անցած ուղին նախախորհրդային շրջանում: Նա ներկայացրել է հիշյալ հինգ հայաբնակ գավառներում ապրած ու ստեղծագործած նշանավոր մարդկանց կյանքը, նրանց ծավալած մանկավարժական, հասարակական-քաղաքական ու գրական-մշակութային գործունեությունը տեղերում, որոնցից շատերը մինչև իրենց կյանքի վերջը ապրել ու գործել են իրենց ծննդավայրերում, առանձին դեպքերում ընթերցողներին ծանոթացրել է նրանց ստեղծագործություններին: Վերջում հեղինակն այն տեսակետն է հայտնում, որ վերոհիշյալ վայրերում մամուլի ու գրատպության սկզբնավորումը մեծապես պայմա-

նավորված է եղել նրանց այդ հայրենանվեր գործունեությամբ ու ժրաջան աշխատանքով:

Այնուհետև հեղինակն իր աշխատանքի առաջին մասի մյուս գլուխներում հավաստի փաստերով ներկայացրել է հիշյալ գավառներում ու մարզերում գործած հայկական տպարանների պատմությունը, ճշգրտել է դրանց հիմնադրման թվականները, մի շարք ուղղումներ ու ճշգրտումներ է կատարել անցյալի հեղինակների աշխատություններում տեղ գտած վրիպումների ու անճշտությունների մեջ:

Ասվածը ավելի հստակ դարձնելու նպատակով բերենք միայն երկու օրինակ: Գ. Լևոնյանն իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (Ե., 1946, 1958) աշխատության մեջ նշում է, որ Ախալցխայում հայկական առաջին տպարանը Մկրտիչ Ղալամբարյանը հիմնադրել է 1888-ին (տե՛ս նշված գրքի 1958 թ. հրատարակության 246 էջում): Սակայն սույն աշխատության հեղինակը հավաստի փաստերով ապացուցում է, որ այդ տպարանը հիմնադրվել է ավելի վաղ՝ 1880-ականների սկզբին, որտեղ 1885 թ. լույս է տեսել Խ. Ստեփանեի խմբագրած «Մանկավարժանոց» հանդեսը և «Մի կողով էլակ» մանկական դրաման, որը փաստորեն Ախալցխայում տպագրված առաջին գիրքն է եղել: Բսկ Գ. Լևոնյանն իր նույն աշխատության մեջ (տե՛ս էջ 231), դրան հակառակ, նշում է, որ Ախալցխայում տպագրված առաջին գիրքը եղել է Գ. Սունդուկյանի «Քանդած օջախը», որը լույս է տեսել 1888-ին: Այնինչ նշված գիրքը, որը եղել է երկրորդը, լույս է տեսել 1889-ին և պատկանում է ոչ թե Սունդուկյանի, այլ Հարություն Մարադյանի գրչին և կրում է «Քանդած օջախ. անցյալից մի հիշողություն» վերտառությունը: Ըստ երևույթին Գ. Լևոնյանին շփոթեցրել է այդ գրքի և Սունդուկյանի կատակերգության վերնագրերի նույնությունը: Նման անճշտություններ ու վրիպումներ Վ. Մաղալյանի կողմից ուղղվել են նաև Թեոդիկի «Տիպ ու տառ»-ում և այլ հեղինակների աշխատություններում ու մատենագիտական ցանկերում:

Այնուհետև հեղինակն առանձին խորագրերի ներքո ներկայացրել է Վրաստանում հայկական տպագրության սկզբնավորման հակիրճ պատմությունը, տվել է Սամցխեի և Ջավախքի գավառներին նվիրված առաջին գրքերի տեսությունը, ապա անցել Ախալցխայում և Ախալքալաքում տեղական մամուլի ու գրատպության հիմնադրման խնդիրներին: Հատկապես նոր փաստերով հագեցված ու հետաքրքիր են աշխատության այն էջերը, որոնք վերհանում են Ջավախք-Մեսխեթյան բարձրավանդակում հայկական առաջին տպարանների արմատավորման պատմությունը, և տալիս է դրանցում տպագրված հայերեն առաջին գրքերի ընդհանուր պատկերը:

Առավել ուշագրավ են Ախալցխայում և Ախալքալաքում հրատարակված «Մանկավարժանոց» հանդեսին (1885 թ.), «Ջավախք» (1913-1916 թթ.) և «Շարժում» (1917-1918 թթ.) պարբերականներին նվիրված ենթագլուխները, որոնցում ներկայացված են դրանց նպատակներն ու ծրագրերը, ինչպես նաև արժարժած խնդիրները: Անդրկովկասի մշակութային օջախներից բավականին հեռու այդ լեռնաշխարհում հիշյալ պարբերականները լուսատու ջահերի դեր են կատարել ու նպաստել խավարի ու սոցիալական ճիրաններում խարխափող աշխատավորության մշակութային առաջընթացին ու լուսավորությանը:

Չնայած առայժմ ոչ հավաստի, սակայն արձանագրված փաստ է, որ դեռևս XIX դարի 80-ական թվականներին Կախեթի կենտրոն Մղնախում գործել է հայկական տպարան: Հեղինակի պրպտումները այդ տպարանում լույս տեսած մի որևէ գիրք հայտնաբերելու ուղղությամբ, անցել են ապարդյուն: Սակայն, ըստ նրա, այդ ուղղությամբ որոնումները

պետք է շարունակվեն: Չէ՞ որ Սղնախում նոր դարասկզբին գործած տպարանը ևս եղել է հայկական ու պատկանել է ոմն Բ. Տեր-Դավթյանի: Գուցե հենց այս տպարանի մասին է խոսքը, որ XIX դարավերջից անցել է նոր դարասկզբ, որտեղ էլ 1912-1917 թթ. լույս է տեսել «Խմա Կախերթիսա» («Կախերթի ձայն») վրացերեն թերթը, որն այդ հայախիտ երկրամասի անդրանիկ լրագիրն է եղել և իր էջերում լայնորեն լուսաբանել է նաև Կախերթի հայության բազմաբեղուն կյանքը:

Սև ծովի հարավարևելյան ափերին գտնվող Բաթում և Սուխում քաղաքները ևս անցյալում ապրել են հայկական մշակութային հարուստ կյանքով: Դրանցում դեռևս XIX դարի վերջերից գործել են հայկական եկեղեցիներ, դպրոցներ, թատերասիներ ու երգչախմբեր, իսկ XX դարամուտին տպագրվել են հայերեն գրքեր ու թերթեր: Բաթումում հայկական գրատպությունը սկիզբ է առել 1900 թվականին, երբ այստեղ լույս է տեսել հայերեն առաջին գիրքը, իսկ 1904 և 1913 թթ. փորձեր են կատարվել լրագիր հրատարակելու ուղղությամբ, որոնք, սակայն, արդյունք չեն տվել: Հայերեն առաջին թերթը Բաթումում տպագրվել է 1917-1918 թվականներին. դա բոլշևիկյան կազմակերպության օրգան «Բանվոր և զինվոր» էր, որից ոչ մի օրինակ ճարդ չի հայտնաբերվել: Հեղինակը ներկայացրել է նաև Բաթումում նախախորհրդային շրջանում հիմնադրված շուրջ հինգ հայկական տպարանների գործունեությունը, ձգարտել է դրանցում տպագրված գրքերի բովանդակությունն ու քանակը և այլն:

Նախախորհրդային շրջանում Սուխումում գործած միակ հայկական տպարանում, ճիշտ է, հայերեն գրքեր չեն հրատարակվել, սակայն լույս են տեսել թվով չորս պարբերականներ՝ «Լույս» (1912-1913 թթ.), «Նոր կյանք» (1913 թ.), «Փարոս» (1919 թ.) և «Կարմիր աստղ» (1920-1921 թթ.), որոնց դերը նույնպես մեծ է եղել թուրքական յաթաղանից մազապուրծ այստեղ ապաստան գտած համալսարանների վերջին խլիպները միավորելու, ուժ ու հոգի ներշնչելու և այս ափերում արմատավորելու գործում:

Կարևոր ենք համարում վկայակոչել նաև այն փաստը, որ Վ. Մադալյանը վրաց տեղական մամուլի ու գրատպության տարեգրությունից վերցված կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, որ Վրաստանի հայաբնակ գավառներում ու մարզկենտրոններում հայկական գրատպությունն ու մամուլը սկզբնավորվել են ավելի վաղ, քան վրացական շատ գավառներում վրաց տեղական մամուլն ու գրատպությունը:

Աշխատության երկրորդ մասն ամբողջությամբ նվիրված է խորհրդային Վրաստանի հայաբնակ մարզերում, գավառներում ու շրջաններում տեղական մամուլի ու գրատպության սկզբնավորման ու զարգացման պատմությանը: Այն բաղկացած է երկու գլխից: Առաջինում հեղինակը խոսում է խորհրդահայ տեղական թերթերի՝ որպես նոր տիպի մամուլի ձևավորման մասին, տալիս է Աբխազական ու Աջարական ինքնավար հանրապետություններում հայկական տպագրության ու մամուլի վիճակը նոր հասարակարգի պայմաններում, ապա ներկայացնում է այդ մամուլի սկզբնավորման գործընթացները նախկին Թոեղքի, Ջավախքի ու Սամցխեի տարածքներում ձևավորված նորաստեղծ հայաբնակ Թեթրիդարոյի, Ախալքալաքի, Ախալցխայի, Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդայի) ու Ծալկայի վարչական շրջաններում, անդրադառնում է ՄՏԿ ու խորհունտեսությունների քաղաքների օրգան բազմատպաքանակ թերթերին և տալիս է հիշյալ շրջաններում շուրջ 30 անուն բազմալեզու (այդ թվում՝ հայերեն) թերթերի ստեղծման պատմությունը, ուրվագծվում է դրանց ուղին մինչև Հայրենական մեծ պատերազմն ու ռազմի տարիներին: Իսկ երկրորդ գրված քննարկվում են հետպատերազմյան տարիների մամուլի և գրատպության հարցերը դարձյալ նույն

մարզերում ու շրջաններում ընդհուպ Խորհրդային Միության փլուզումը, և դադարում են նաև այդ թերթերի հրատարակությունները:

Խորհրդային տարիներին որոշակի զարգացում է ունեցել նաև հայկական գրատպությունը: Շրջանային տպարաններում, տեղական հեղինակների ստեղծագործություններից բացի, լույս են ընծայվել գրական-գեղարվեստական մի քանի ժողովածուներ, որոնցից գրքում վկայակոչված են «Շավիղ», «Ձայն համշենական», «Մն ծովյան այգաբաց», «Ջավախքի գուսանական երգեր», «Ջավախքի ժողովրդական երգեր», «Ջավախքի կանչեր», «Ջավախքի դողանջներ» արժեքավոր գրքերը և այլն:

Սույն աշխատանքը, վրացահայ տեղական մամուլի ու գրատպության պատմության ուսումնասիրության ասպարեզում առաջին հաջողված փորձը լինելով հանդերձ, ունի նաև որոշ թերություններ: Ըստ երևույթին, գրքի ծավալը թույլ չի տվել հեղինակին ավելի խորությամբ ու լայնությամբ ուսումնասիրելու այդ չուսումնասիրված մամուլի բոլոր խնդիրները: Նկատվում է, որ գրքի երկրորդ մասը, առաջինի հետ համեմատած, գրվել է ավելի համառոտ: Նրանում խմբագիրների ու հրապարակախոսների, առավել աչքի ընկած թղթակիցների ու լրագրողների մասին տեղեկությունները սուղ են, նույնիսկ որոշ դեպքերում նշված չեն անուն-ազգանունները: Կան կրկնություններ: Օրինակ, էջ 126-ում Ախալքալաքում տպագրված մի քանի գրքերի վերնագրերը նույնությամբ կրկնվել են նաև էջ 227-ում, այս անգամ արդեն որպես «Ջավախքի» հավելվածներ: Նման կրկնություններ նկատվում են նաև գրքի այլ էջերում: Տարբեր տեղերում առկա են նաև սրբագրական վրիպակներ ու այլ թերություններ:

Ամփոփելով նշենք, որ մասնագետների ու ընթերցող լայն շրջաններին է հանձնվել գիտական պատշաճ մակարդակով գրված մի մենագրություն, որը, նշված թերություններով ու վրիպումներով հանդերձ, նորություն է վրացահայ պարբերական մամուլի ու գրատպության անցած ավելի քան հարյուրամյա ուղու ուսումնասիրության ասպարեզում: ԵՊՀ հրատարակչության կողմից սույն գրքի լույսընծայումը, երբ նշվում է հայ գրատպության սկզբնավորման 500-ամյակը, մեր կարծիքով, լավ նվեր է համազգային այդ մեծ տոնին:

ԱԼԹԱՆ Լ. Ա.

Բանասիրական գիտությունների դոկտոր